ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

28 օգոստոսի 2025 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 (տասնհինգ) անդամներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Նիստին ներկա էին Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Աղվան Հարությունյանը, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Տիգրան Հովսեփյանը և գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են տասնհինգը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 28-ի արտահերթ թիվ 08 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

5. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի «Արև» մանկապարտեզի շենքի անհրաժեշտ վերանորոգման և բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ – 8 Դեմ - 1 Ձեռնպահ - 6

Որոշումն ընդունված է. /որոշում N 36-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ընդունել ի գիտություն Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 7 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 37-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 7 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 38-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 7 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 39-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով «Գլոբալ սուրվեյ» դատական փորձաքննությունների ասոցիացիա սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնահատման թիվ Պ0725-100-ից մինչև թիվ Պ0725-100/24 հաշվետվություններն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 88 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝

N 30062025-07-0234, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0075), 89 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0214, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0069), 90 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0219, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0084), 91 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0252, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0080), 92 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16072025-07-0179, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0074), 93 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 01072025-07-0012, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0082), 94 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0156, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0072), 95 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0155, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0068), 96 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0262, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0077), 97 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0186, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0073), 98 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 04072025-07-0101, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0086), 99 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0201, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0070), 100 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0194, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0079), 101 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0225, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0083), 102 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0247, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0067), 103 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 02072025-07-0258, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0085), 104 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0198, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0081), 105 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0180, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0078), 106 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 01072025-07-0221, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0071) և 107 հասցեի 0.0483 հեկտար մակերեսով (վկայական՝ N 30062025-07-0182, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0053-0076), Սարալանջ թաղամասի 2-րդ փողոց 24/1 հասցեի 0.04342 հեկտար մակերեսով (վկայական՝ N 27052025-07-0117, կադաստրային ծածկագիրը՝

07-003-0040-1100), գյուղ Նուռնուս Գարուն թաղամասի 1-ին փողոց 137/1 հասցեի 0.0285 հեկտար մակերեսով (վկայական՝ N 27052025-07-0065, կադաստրային ծածկագիրը՝ 07-051-0101-0446), Շինարար թաղամասի 3-րդ փողոց 13 հասցեի 0.05003 հեկտար մակերեսով (վկայական՝ N 22072025-07-0149, կադաստրային ծածկագիրը՝ 07-051-0158-0138) և Ամառանոցային փողոց 2-րդ փակուղի 10/1 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 22072025-07-0079, կադաստրային ծածկագիրը՝ 07-051-0158-0137) բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերն օտարելու համար:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 7 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 40-Ա/

Լսեցին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԱՐԵՎ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված Բյուրեղավան բնակավայրի մանկապարտեզի հետագա շահագործումը երեխաների համար ավելի որակյալ պայմաններում կազմակերպելու անհրաժեշտությամբ՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի «Արև» մանկապարտեզի շենքի անհրաժեշտ վերանորոգման և բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 41-Ա/

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ԱՎԱԳ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱՂԻՅԱՆ

ՍՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ